

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Գ ԵՎ Գ ՅՈՒՆԻՖՈՐՄ ՍՊՐ-Ն ԲԵՑ-ԷԱՃԱՊՁԲ-23/11 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Կոստյում բամբակյա կոմպլեկտ (ամառային) Ամառային արտահագուստը բաղկացած է բաճկոնից և տաբատից: Կտորի բաղադրությունը՝ 51% բամբակ և 49% պոլիէստեր, մակերեսային խտությունը՝ 212գր/մ2: Կտորը ջրադիմացկուն է, հակաստատիկ թելով գործվածքով, որի 1*1 հատվածին ընկնում 1 սմ հակաստատիկ թել, ունենի դիէլեկտրիկ հատկություն: Գույնը՝ կապույտ, դեղինի համադրությամբ, որոնց երանգները կհամաձայնեցվեն պատվիրատուի հետ: Գծային չափսերի փոփոխությունը (նստվածքը) 10 /տաս/ անգամյա լվանալուց հետո չի գերազանցում 2-3%: Հիմքի պատռման բեռնվածությունը (разрывная нагрузка основы) ոչ պակաս 2,500 Н, յուղակայունությունը ոչ պակաս քան 115 պ.մ., ջրակայունությունը ոչ պակաս քան 180 ջրային կաթիլ/մմ:</p> <p>Արտահագուստն ունի 7 գրպան, որից 4-ը բաճկոնի վրա, իսկ 3-ը տաբատի, բաճկոնի կրծքավանդակի շրջագծով լուսանդրադարձնող ժապավեն դեղին գույնով: Բաճկոնի թևքերին և տաբատի ծնկամասից ներքև 5 սմ լայնությամբ լուսանդրադարձնող ժապավեններ դեղին գույնով: Բաճկոնը՝ կարճեցված գոտիով, կենտրոնական ճարմանդ-շղթայով՝ պաշտպանված կաչուն ժապավենով ամրացող վրադիր դետալով, օձիքը ծավվող: Բաճկոնի եզրային գոտու շրջագծի կողքային հատվածները կարգավորվում են ռետինե ժապավենով: Բաճկոնի կրծքավանդակի ձախ մասում՝ 1 վրադիր գրպան կափույրով, որի վրա ասեղնագործված են «ԲԵՑ ՓԲԸ» բառերը, իսկ աջ մասում՝ 1 վրադիր գրպան բաց մուտքով: Բաճկոնի թևերը՝ ռետինե ռեզինով, որը կարված է կտորի մեջ: Բաճկոնի վրա՝ հավելյալ վրադիր արմունկի հատվածում: Բաճկոնի վրա 2 կողքային գրպան թեքված մուտքով: Բաճկոնի մեջքի կենտրոնական մասում 18 սմ լայնությամբ ասեղնագործված է «ԲԱՐՁՐԱՎՈՒՆ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ բառերը: Տաբատը՝ ուղիղ</p>

ուրվագիծով: Առաջամասի մուտքի բացվածքը կայծակ-շղթայով և կոճակով, մեջքի հատվածում գոտու կարգավորիչ  
ռետինե ժապավենով, 2 կողքային գրպան թեքված մուտքով, իսկ հետևի 1 վրադիր գրպան բաց ուղիղ  
մուտքով: Ապրանքները չօգտագործված են: Կտորը, որից կարվելու է հագուստը, ունենի որակի  
համապատասխանության սերտիֆիկատ, լաբորատոր փորձարկումների արձանագրություն և  
համապատասխանում է СТО 71327041-004-2008, EN ISO 14116, ГОСТ Р 12.4.236-2007 ստանդարտներին: Արտաքին  
տեսքը համաձայն հաստատված նմուշի:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Г и Г ЮНИФОРМ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом РЭС-ЕЦХЦПЗР-23/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	